

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2017 թվականի
դեկտեմբերի 21-ին

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2004 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-104 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 25-րդ հոդվածի 1-ին մասի «ը» կետում «վարչապետի» բառը փոխարինել «Ազգային ժողովի նախագահի, պետական նախարարի» բառերով:

Հոդված 2. Օրենքի տեքստում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով, բացառությամբ ««Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Զենքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Սնանկության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի» և ««Պետական տուրքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերում:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 28
Ստեփանակերտ
ՀՕ-88-Ն